ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Միլենա Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ք. Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միացյալ թագավորություն, 2025 թվականի մայիսի 13-ից 16-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կառավարիչների խորհրդի 34-րդ տարեկան հանդիպմանը և գործարար համաժողովին

5. **Քննարկված թեմաները՝**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) Կառավարիչների խորհրդի 34-րդ տարեկան հանդիպման շրջանակներում կազմակերպված համատեղ և առանձին հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել համաշխարհային տնտեսության վերջին զարգացումներին, գլոբալ արդի մարտահրավերներին և դրանց լուծմանն ուղղված ջանքերին: Կառավարիչների խորհրդին են ներկայացվել ՎԶԵԲ վարչական, ֆինանսական և գործառնական ուղղությունների զարգացումները, 2025 թվականի կատարողականը, ՎԶԵԲ գործառնության երկրներում կատարված աշխատանքները:

Երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես ՎԶԵԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այնպես էլ այլ երկրների և միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող և համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Տարեկան հանդիպման շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարի գլխավորած պատվիրակությունը իր մասնակցությունն է ունեցել առանձին հանդիպումների ինչպես ՎԶԵԲ բարձրաստիճան պաշտոնյաների, այնպես էլ այլ երկրների և միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ:

Այցի առաջին օրը՝ մայիսի 13-ին, կայացել է հանդիպում ՎԶԵԲ նախագահ Օդիլ Ռենո-Բասոյի հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել արդյունավետ երկկողմ համագործակցությանը և օրակարգային հարցերին, մասնավորապես ընթացիկ

ենթակառուցվածքային ծրագրերին և նոր ծրագրային նախաձեռնությունների հնարավորություններին:

Նույն օրը ՀՀ պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի հարցերով նորանշանակ ՎԶԵԲ տնօրենների խորհրդի անդամ Ռենե վան Հելլին: Կողմերը հայտնել են փոխադարձ վստահության և գնահատանքի մասին՝ տնօրենների խորհրդում Հայաստանի շահերը մշտապես պատշաճ կերպով ներկայացնելու գործում:

Առանձին հանդիպում է կայացել նաև Սլովենիայի Հանրապետության Ֆինանսների նախարար, ինչպես նաև 2025 թվականի ՎԶԵԲ կառավարիչների խորհրդի նախագահ Կլեմեն Բոստանչիչի հետ: Քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարներին առնչվող հարցեր, մասնավորապես պետական ֆինանսների ոլորտում փորձի փոխանակման և կարողությունների զարգացման համատեքստում:

Այցի երկրորդ օրը՝ մայիսի 14-ին, պատվիրակությունը հանդիպել է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) փոխնախագահ Թերեզա Չերվինսկային: ԵՆԲ փոխնախագահը բարձր է գնահատել Հայաստանի հետ ընթացիկ համագործակցության աճող մակարդակը և հույս հայտնել հարաբերությունների ամրապնդման և առաջիկայում նոր ներդրումային ծրագրերի շուրջ ակտիվ աշխատանքի մասին:

Հանդիպումներ են տեղի ունեցել ունեցել նաև ՎԶԵԲ առանձին մասնագիտական թիմերի հետ և քննարկել ՀՀ պորտֆելում առկա կարևոր ենթակառուցվածքային ծրագրերի առաջընթացը, ինչպես նաև առկա խնդիրները:

ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Եգիպտոսի պլանավորման, տնտեսական զարգացման և միջազգային համագործակցության նախարար տիկին Ռանիա Ալ-Մաշաթին: Հանդիպման շրջանակներում կողմերը քննարկել են տնտեսական համագործակցության ընդլայնման, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավման ոլորտում փորձի փոխանակման հնարավորությունները:

Աշխատանքային այցի ընթացքում պատվիրակությունը մի շարք քննարկումներ է ունեցել ինստիտուցիոնալ ներդրողների ընտրված խմբերի հետ, ինչպես նաև JP Morgan-ի, Bank of America-ի և այլ խոշոր ֆինանսական հաստատությունների շահագրգիռ ներկայացուցիչների հետ:

Մայիսի 14-ին կայացել է նաև Կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպման պաշտոնական բացման արարողությունը՝ անդամ երկրների պատվիրակությունների և գործարար համայնքի ներկայացուցիչների, այդ թվում և հայկական պատվիրակության մասնակցությամբ:

Պատվիրակության այցի վերջին օրը՝ մայիսի 15-ին, կազմակերպվել է ՎԶԵԲ Կառավարիչների խորհրդի լիագումար նիստը, որի շրջանակներում հաստատվել են ՎԶԵԲ-ի՝ 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունն ու կատարողականը, Կառավարիչներին է ներկայացվել 2025-2027 թվականների ռազմավարության իրականացման պլանը, կառավարիչների քվեարկությանն են ներկայացվել մի շարք հարցեր, ընդունվել են բանաձևեր: Մասնակից երկրների ներկայացուցիչները մտքեր են փոխանակել արդի մարտահրավերների վերաբերյալ:

Պատվիրակությունը մասնակցել է նաև Բանկ օֆ Ամերիկայի կողմից կազմակերպված «CEEMEA Փոքր զրույցների սիմպոզիում»-ին, որին ներկա էին Լոնդոնում հաստատված ինստիտուցիոնալ ներդրողների հետ:

Նույն օրը ՀՀ դեսպանության կողմից կազմակերպված ընդունելության շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպել է Միացյալ Թագավորության հայ գործարարների, ինչպես նաև հեղինակավոր ֆինանսական կառույցներում աշխատող հայազգի ներկայացուցիչների հետ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպումների և քննարկումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

21 մայիսի, 2025թ.